# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

10032926

N 416-12
30.01.2012թ

*0078 Երևան, Հալաբյան 41 ա, հեռ. 380385*
*Էլ. փոստ՝ grigor.mouradian@justice.am*

**ՀՀ կենտրոնական բանկի նախագահ**
**պարոն Ա. Ջավադյանին**

**Ի պատասխան Ձեր 2011 թվականի դեկտեմբերի 28-ի**
**15.1-06/1324-11 թվակիր նամակի**

**Հարգելի պարոն Ջավադյան**

Կից ներկայացնում ենք «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի առնչությամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը, ինչպես նաև հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

**Հարգանքով՝** **Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

**Կատարող՝ Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,**
**Ա. Խաչատրյան, հեռ.՝ 380-227**

## ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

1. Ներկայացված նախագծի 1-ին հոդվածով լրացվող 204.3-րդ, 204.6-րդ, 204.7-րդ, 204.8-րդ և 204.10-րդ հոդվածներով անհրաժեշտ է նախատեսել ազատազրկման հետ չկապված պատժատեսակ՝ հաշվի առնելով նշված հոդվածներով սահմանված հանցագործությունների օբյեկտը և բնույթը: Մասնավորապես՝ նշված հոդվածներով սահմանված հանցագործությունների օբյեկտ են հանդիսանում տնտեսական (գույքային) բնույթ կրող հասարակական հարաբերությունները: Այդ առումով գտնում ենք, որ նշված հոդվածներում որպես պատժի տեսակ անհրաժեշտ է նախատեսել նաև տուգանքը, ինչը բխում է կատարված հանրորեն վտանգավոր արարքի համար համաչափ պատիժ նշանակելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով ամրագրված արդարության սկզբունքից:

Միևնույն ժամանակ գտնում ենք, որ ներկայացված նախագծի 1-ին հոդվածով լրացվող հոդվածներով նման խիստ սանկցիաների սահմանումը պետք է պայմանավորված լինի արարքի հասարակական վտանգավորության աստիճանով, ինչը պետք է արտացոլվի նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ: Այդ առումով հիշյալ հոդվածների սանկցիաներում ազատազրկման խիստ պատժաչափի սահմանումը, ինչպես նաև ազատազրկման հետ չկապված պատժատեսակ չնախատեսելու հանգամանքը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի: Մասնավորապես, գտնում ենք, որ նման բնույթի հանցագործությունների համար ազատազրկման հետ կապված պատժատեսակի սահմանումը չի կարող դիտվել որպես տվյալ տեսակի հանցագործությունների կանխման արդյունավետ միջոց:

2. Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 204.8-րդ հոդվածի դիսպոզիցիայում նախատեսվող դրույթների շարադրանքը բովանդակային առումով հստակեցման կարիք ունի՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:

3. Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 204.4-րդ հոդվածի 3-րդ մասի կետերի համարակալումը վերանայման կարիք ունի:

**«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

Ներկայացված նախագծի 1-ին, 2-րդ և 3-րդ հոդվածներն անհրաժեշտ է համապատասխանեցել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, քանի որ հստակ չէ «էական նշանակություն ունեցող այլ հանգամանքների» իմաստային նշանակությունը:

**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ**

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկություններ չունենք:

**Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝** **Կ. ԽՏՐՅԱՆ**